

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԴԱՍՎԱՐ

ԹԵՄԱ՝

ՊՐՈԲԼԵՄԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ

Կազմեց՝ _____ Ջեմա Գրիգորյան Սոսիկի _____
(անուն, ազգանուն հայրանուն,)

«Կապանի №3 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ _____ Լուսինե Բալայան _____

<<Կապանի N2 ավագ դպրոց>> ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2023

Բովանդակություն

Ներածություն.....	3
ԳԼՈՒԽ 1. Պրոբլեմային ուսուցում – ուսումնասրություն.....	4
Գլուխ 1.1 Պրոբլեմային ուսուցման հատուկ գծեր.....	5
Գլուխ 1.2 Պրոբլեմային ուսուցման ֆունկցիաները.....	6
Գլուխ 1.3 Պրոբլեմային ուսուցման կազմակերպման մակարդակներ.....	6
Գլուխ 2. Պրոբլեմային դասերի պլանավորում.....	8
Գլուխ 2.1 Օգնություն աշակերտներին հարցը ճշգրիտ ձևակերպելու հարցում.....	9
Գլուխ 3. Անձնական փորձ և հետազոտություն.....	12
Գլուխ 3.1 Օրվա դասի պլանը	14
Եզրակացություն.....	17
Օգտագործված գրականության ցանկ.....	18

Ներածություն

<<... Իրական գիտելիքի շնորհիվ դու կլինես ավելի համարձակ ու կատարյալ, քան առանց նրա>> Ալբերտ Դյուրեր

Հանրակրթական էական բարեփոխումները դառնում են անհրաժեշտ ու անխուսափելի: Կրթական բարենպաստ միջավայրի ստեղծման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում:

Ժամանակակից դպրոցի առաջ դրված խնդիրների լուծումը պահանջում է սովորողների կողմից ինքնուրույն աշխատանքի կատարում: Այն սովորողների զարգացման, համոզմունքների ձևավորման, նրանց պրակտիկ գործունեության համար պատրաստելու անհրաժեշտ միջոց է:

Փորձենք համեմատական անցկացնել ավանդական և նոր մեթոդների միջև: Ավանդական մեթոդների հիմքում ընկած է պատրաստի գիտելիքների պարզ փոխանցումը սովորողներին և նրանց կողմից ինֆորմացիայի պարզ վերարտադրում:


Նոր մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, նրա ակտիվ և անմիջական մասնակցությունը գիտելիքների ձեռքբերման գործընթացում:

Կրթադաստիարակչական պրոցեսում առանձին տեղ է գրավում նոր մեթոդների կիրառումը, որոնք հնարավորություն են ընձեռնում աշակերտ-ուսուցիչ կապի լիարժեք հաստատմանը, սովորողի գիտելիքների բացահայտման ու ամրապնդման գործընթացում:

Կիրառվող մեթոդներից արդյունավետ և հաճախակի է օգտագործվում պրոբլեմային ուսուցումը, որը՝ նպաստում է աշակերտների մտածողության մակարդակի բարձրացմանը:

ԳԼՈՒԽ 1. Պրոբլեմային ուսուցում – ուսումնառություն

Դեռևս Սոկրատեսն էր իր սաներին սովորեցնում տրամաբանորեն մտածել: Սակայն առաջին անգամ տեսականորեն այն մշակել է ամերիկացի փիլիսոփա, մանկավարժ Ջոն Դյուին:



Ըստ ռուս հայտնի հոգեբան Ս.Լ. Ռուբինշտեյնի մարդու մտածողությունը կարելի է զարգացնել միայն ճանաչողական պրոբլեմների լուծման միջոցով: Ճանաչողական զարգացման տեսության հիմքում ընկած են Պիաժեի, Վիգոտսկու, Բրուների հայացքները:



Ըստ Վիգոտսկու գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիրը, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրված համատեղ ջանքերով:



Ջոն Բրուները մշակե հետազոտական ուսուցման գաղափարը և ներկայացրեց մի մոդել, որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերածվում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորել, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Ուսուցման կարևոր պայմաններից է անսովեր, անսպասելի թեկուզ հակասական հարցերի և իրավիճակների առաջացումը: Այս ուսուցումը կարելի է կազմակերպել դասի ցանկացած փուլում, հատկապես նոր նյութի յուրացման և ամրապնդման ժամանակ: Պրոբլեմային խնդրի լուծման ուղին ներառում է «ընկալման տրամաբանական մտածողություն, փայլատակման փուլերը»:

Ընկալման փուլում աշակերտը պատկերացում է կազմում խնդրի մասին: Տրամաբանական մտածողության փուլում արդեն բացահայտում է գործընթացների բուն էությունը: Իսկ փայլատակման փուլում ինքնուրույն գտնում է ելքը, ինչը բարձրացնում է սովորողի զգացումը:

Գլուխ 1.1 Պրոբլեմային ուսուցման հատուկ գծեր

Պրոբլեմային ուսուցում դասավանդման մոդելի հատկանիշները.¹

- Խթանող հարց կամ խնդիր. դրանք արտացոլում են իրական կյանքի այնպիսի իրավիճակներ, որոնք պարզ պատասխանով չեն լուծվում, կան հանգուցալուծման մրցակցող տարբերակներ: Կազմակերպվում է հասարակության հուզող և աշակերտի համար իմաստալից հարցերի ու խնդիրների շուրջ:

- Միջառարկայական կենտրոնացում. Չնայած պրոբլեմային դասը կարող է կենտրոնացած լինել որոշակի առարկայի շրջանակներում (մաթեմատիկա, բնագիտություն), հետազոտվող իրական խնդիրն ընտրվում է հենց այդ պատճառով, խնդրի հանգուցալուծման համար աշակերտը ստիպված լինի բազմաթիվ առարկաների ոլորտներում:

- Իրական հետազոտություն: Աշակերտներից պահանջվում է հետամուտ լինել խնդիրների իրական լուծումների հայտնաբերմանը նպատակաուղղված իրական հետազոտության: Նրանք պետք թ վերլուծեն և սահմանեն խնդիրը, մշակեն վարկածներ և կանխատեսումներ անեն, տեղեկություններ հավաքեն և քննարկեն, անհրաժեշտության դեպքում փորձեր կատարեն, եզրահանգումներ անեն:

- Իրերի և ցուցանմուշների կերտում, ստեղծում: Պրոբլեմային ուսուցումն աշակերտներից պահանջում է իրենց լուծումները ցուցադրող կան բացատրող վերջնարդյունքի պատրաստում՝ ցուցանմուշի կամ ներկայացման տեսքով: Աշակերտների պատրաստած ցուցանմուշները և ներկայացումները ցույց են տալիս նրանց կողմից յուրացրած գիտելիքների չափը:

- Համագործակցություն: Համագործակցային ուսումնառության պես խնդրակենտրոն դասավանդմանը բնորոշ է աշակերտների միջև համագործակցությունը՝ առավելապես զույգերով կամ փոքր խմբերով:

¹ Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, ԱՅՌԵՔՄ, Երևան 2003

Գլուխ 1.2 Պրոբլեմային ուսուցման ֆունկցիաները

Պրոբլեմային ուսուցումը կատարում է զարգացնող և դաստիարակչական ֆունկցիաները:

Զարգացնող ֆունկցիաները բազմազան են : Օրինակ մոդելավորվում է աշակերտների մտածողությունը , բարձրացնում է նրա արդյունավետությունը: Ուսումնական առարկաների տրամադրությանը մոտեցնում է գիտությունների տրամաբանությանը, իսկ ուսուցման տրամաբանությունը՝ ճանաչողական տրամաբանությանը: Կազմակերպվում է սովորողների խմբային մոտավոր աշխատանքը, ապահովում է նրանց մտածողության դիալեկտիկական զարգացումը, իրացնում է գիտելիքների փոխանցումը նոր իրավիճակներում:

Պրոբլեմային Ուսուցումը ունի հատուկ դաստիարակչական ֆունկցիաներ: Դրանցից են՝ սովորողների գործնական հմտությունների դաստիարակումը, ձեռք բերած գիտելիքների ստեղծագործական փորձի կուտակումը և այլն:

Պրոբլեմային ուսուցումը օգնում է աշակերտին դառնալ անկախ և ինքնուրույն սովորողներից:

Գլուխ 1.3 Պրոբլեմային ուսուցման կազմակերպման մակարդակներ

1. Ուսուցման նյութի պրոբլեմային ներկայացում ուսուցչի կողմից:

Ուսուցիչը նպաստում է սովորողի ինքնուրույն մտածողության ձևավորմանն ու զարգացմանը: Պետք է ստեղծել պրոբլեմային իրավիճակ անսովոր հարցերի, խնդիրների, հանելուկներ գուշակելու և այլ եղանակներով: Սովորելու նկատմամբ հետաքրքրասիրությունը խթանող ուսուցման այս ձևը պահաջում է նյութի լավ իմացություն, ուստի այն արդյունավետ կլինի կիրառել գիտելիքի ստուգման ամփոփիչ դասերին կամ ամրապնդման փուլում:

Պրոբլեմային ուսուցման երկրորդ մակարդակը

Ուսուցչի կողմից պրոբլեմային իրավիճակների ստեղծում և լուծման որոնում աշակերտների հետ միասին: Այսպիսի մոտեցման համար կարելի է հանգուցալուծմանը հասնել հուշող, ուղղորդող հարցերի միջոցով «շղթա» խաղի միջոցով, երբ մեկնաբանում է հարցի մի կողմը, իսկ մյուսները լրացնում են՝ չկրկնելով իրար: Բացի ուսումնական նպատակներից, այն լուծում է նաև դաստիարակչական խնդիրներ՝ համագործակցելու, միմյանց լրացնելու և այլն:

Պրոբլեմային ուսուցման երրորդ մակարդակը

Այն է ուսուցչի կողմից պրոբլեմային իրավիճակի ստեղծում և լուծման որոնում, վերջնարդյունքի ապահովում միայն աշակերտների միջոցով: Այս դեպքում սովորողի ինքնուրույն աշխատանքին կնպաստի ուսուցչի ուղղորդած լրացուցիչ գրականության օգտագործումը: Այս մակարդակը հարմար է ավելի հասուն տարիքի դասարաններում, որտեղ պահանջվում է նաև սովորողների ինքնուրույն աշխատանքի բավականաչափ փորձ: Մասնագիտական պատրաստվածության բարձր աստիճան է պահանջվում նաև ուսուցչից, ճիշտ կողմնորոշվելու համար, այնպիսի իրավիճակներում, երբ աշակերտները առաջարկում են խնդրի լուծման արտասովոր եղանակ: Այս ամենը նպաստում է սովորողների հմտությունների կատարելագործմանը, փոխվստահության խորացմանը:

Պրոբլեմային ուսուցման կազմակերպման չորրորդ մակարդակ

Ուսուցչի առաջարկած նյութից աշակերտների կողմից պրոբլեմային իրավիճակի ստեղծում և լուծման ինքնուրույն որոնում: Այս ձևի առանձնահատկությունը հետազոտական մոտեցումն է: Սովորողներից պահանջվում է լրացուցիչ գրականություն, անհրաժեշտ այլ ռեսուրսներ ինքնուրույն որոնման հմտություններ: Արդյունավետության համար անհաժեշտ է նախորդ մակարդակների հատկանիշներից բացի ունենալ ստեղծագործական մտածողություն, երևույթների միջև փոխադարձ կապերի և դրանց միասնական ամբողջականություն կազմելու մեխանիզմների բացահայտման կարողություն:

Պրոբլեմային ուսուցումը վերլուծական և ստեղծագործական մտածողության հիմքն է:

Գլուխ 2. Պրոբլեմային դասերի պլանավորում

Նպատակները. Վերևում բացատրվել է, որ պրոբլեմային ուսուցումը հետապնդում է այնպիսի նպատակներ, ինչպիսին են՝ աշակերտներին օգնել զարգացնելու իրենց մտավոր և հետազոտական հմտությունները, աշակերտներին օգնել դառնալու ինքնուրույն սովորողներ: Պրոբլեմային դասավանդման մոդելի հիման վրա կառուցված որոշ դասեր կարող են այս բոլոր նպատակները համատեղել: Բայց և այնպես, առավել իրատեսական է, որ ուսուցիչը որոշակի դասաշար նպատակաուղղի վերոնշյալներից մեկ երկուսին:

Պրոբլեմային ուսուցման մոդելով առաջնորդվող ուսուցիչները գործուն մասնակցություն են ունենում աշակերտների հետազոտության խնդիր ընտրելու հարցում, քանի որ սա աշակերտներին ավելի է ոգևորում: Օրինակելի իրավիճակն առնվազն պետք է բավարարի հետևյալ հինգ չափանիշների.

- ❖ *Պետք է իրական լինի: Սա նշանակում է, որ խնդիրը պետք է խարսխված լինի ոչ թե գիտության տվյալ ճյուղի սկզբունքներին, այլ աշակերտի իրական կենսափորձին:*
- ❖ *Խնդիրը պետք է որոշ չափով ոչ հստակ ձևակերպում ունենա, որպեսզի իր խորհրդավորությամբ ու խճճվածությամբ գրավի աշակերտին:*
- ❖ *Խնդիրը պետք է իմաստալից լինի և համապատասխանի աշակերտների մտավոր զարգացման մակարդակին:*
- ❖ *Խնդիրը պետք է բավարար չափով ընդգրկուն լինի, որպեսզի ուսուցիչը հնարավորություն ունենա իրագործել իր ուսուցողական նպատակը:*
- ❖ *Ցանկալի է, որ օրինակելի խնդրի լուծումը խմբային աշխատանք ներառի:*

Խնդրի ընտրությունը կատարելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի հետևյալ նկատառումները.

- *Արդյո՞ք այդ իրավիճակը հետաքրքիր կլինի աշակերտների տվյալ խմբի համար:*
- *Այս խնդրի հետազոտումն իրագործելի՞ է և արդյո՞ք հատկացված ժամանակն ու նյութատեխնիկական առկա պաշարներն արդյունավետ հետազոտություն վարելու հնարավորություն են ընձեռում:*

Գլուխ 2.1 Օգնություն աշակերտներին հարցը ճշգրիտ ձևակերպելու հարցում

Հարցերի հիման վրա խնդիրների հանգուցալուծման ռազմավարություններ յուրացնելու միջոցով աշակերտներն առավել արդյունավետ մտածողներ ու սովորողներ են դառնում: Կառուցողականության ուղղությանը հարող ուսուցիչներին միավորում է երեխայի մտքի ներուժին, մտածողությանը «մարտահրավեր նետելու» և այդ մտածողությունը հղկելու անհրաժեշտության և ուսումնական ծրագիրը բարեփոխելու նրանց կարողության նկատմամբ հիմնարար հավատը: Դասավանդման աշխարհը ողողված է կառուցողականության գաղափարներով:

Ինչպե՞ս կիրառել կառուցողականության սկզբունքները:

Կառուցողականության առաջնային նպատակները գովելի են և պարզ. աշակերտներին օգնել դառնալու ինքնուրույն սովորողներ և մտածողներ, հետազոտելու կարևոր հարցեր, կուտակելու առավել խորությամբ ընկալվող և ինտեգրվող գիտելիքի պաշար: Մարտահրավերը ոչ միայն տեսության որդեգրումն է, այլև դրա կիրառումը:

Մտածելու հմտություններ:

Մտածելու կարողությունը հիմնված է կարևոր հարցեր արծարծելու և քննելու ունակության վրա: Հարցերը մեզ պարտադրում են նոր տեղեկատվություն ձեռք բերել, վերլուծել և ինտեգրել: Մարդիկ ընդամենը տեղեկատվություն պարունակող տարաներ չեն: Նրանք կուտակում, համակարգում և վերլուծում են

տեղեկատվությունը, այնուհետև դա իմաստավորելու համար եզրահանգումներ կատարում:

Ինչու՞ է արդյունավետ հարցադրումը կարևոր գիտելիքի կուտակման և մտածողության համար:

Դպրոցներում գնալով հարցեր վերլուծելու և հարթելու նպատակով արդյունավետ աշխատանք ծավալելը դառնում է հրամայական պահանջ: Շատ կարևոր է ոչ միայն ճշգրիտ հարցեր արձարծել, այլև՝ դրանք տրամաբանական հերթականությամբ ներկայացնել: Առանց հերթագայված հարցադրման ռազմավարության՝ խմբերը հաճախ շփոթության մեջ են ընկնում, շեղվում թեմայից կամ շրջանցում տեղեկատվության կարևոր հատվածներ:

Համպատասխան ռազմավարություններ:

Հարցադրման հանրաժանոթ 2 մոդելների ու ռազմավարությունների սուկրատեսյան հարցադրման և Բլումի դասակարգման շնորհիվ ուսուցիչներն առավել խորությամբ են ընկալում հարցադրումների անհրաժեշտությունը և հղկում դրանց լայն շրջանակ արձարծելու հմտությունը: Սակայն հարցադրումներ կատարելու ռազմավարություններիմեծ մասը զգալի թերություններ ունի.

- Հարցադրումներ կատարելու ռազմավարությունների մեծ մասը, չնայած արդյունավետ է տվյալ պահին միտքը խթանելու տեսակետից, գրեթե անգոր էաշակերտների մտածողությունն ինտեգրելու և տրամաբանված մանրագնին կշռադատված եզրակացություն ձևավորելու հարցում: Հարցադրումները գրեթե պատահական բնույթ են կրում:

- Հարցադրումներ կատարելու իրավունքը դեռևս արտոնված է ուսուցչին: Սակայն աշակերտների մտածողությունը և հարցադրումներ կատարելու հմտությունը զարգացնելու համար շատ կարևոր է, որ հարցերը աշակերտներն իրենք արձարծեն: Մենք պետք է աշակերտներին օգնենք հղկելու դժվար և իմաստալից հարցեր արձարծելու ունակությունը: Ուսուցիչների կողմից արդյունավետ հարցադրումը խթանում է աշակերտների միտքը, սակայն ոչ միշտ է օգնում հղկելու աշակերտների հարցադրման հմտությունը: Աշակերտները մտածողության

անհամեմատ առավել մեծ բարձունքների են հասնում, երբ նրանց խրախուսում են զարգացնել քննադատական և ստեղծագործական հարցեր տալու հմտությունը, երբ նրանց հնարավորություն է ընձեռնվում երկխոսություն ծավալելու դասընկերների հետ՝ մատուցված տեղեկատվության հիման վրա հարցադրումների և դրանից բխեցված եզրահանգումների շուրջ:

Մեզ անհրաժեշտ են խնդիրների հանգուցալուծման՝ հարցերի միջոցով ուղղորդվող ռազմավարություններ, որոնք բնորոշվում են հետևյալ հատկանիշներով.

- **Համապարփակ:** Միտքն ուղղորդում է դեպի համապատասխան բոլոր փոփոխականների տեսանկյունների և տեղեկատվության քննարկում:
- **Հարմարեցվող:** Հնարավոր է համապատասխանեցնել դասարանի, ունակության և ուսումնական ծրագրերի տարբեր մակարդակներ ունեցող աշակերտների պահանջներին:
- **Զատորոշող:** Դրանք պետք է համապատասխանեն տարբեր իրավիճակների պահանջներին:
- **Արդյունավետ:** Կիրառելիս ստացվում է արդյունք,որոշում, վճիռկամ եզրահանգում:
- **Փոխանցելի:** Այս ռազմավարություններ հնարավոր է սովորեցնել աշակերտներին, որպեսզի հարցադրումներ կատարեն:

Այս ռազմավարությունները պետք է բավականաչափ բարդ լինեն խնդիրների և դեղեմանների լայն շրջանակ հանգուցալուծելու համար, բայց և միաժամանակ պետք է բավականաչափ պարզ լինեն, որպեսզի դրանք կիրառվեն տարիքային տարբեր խմբերի և հմտությունների տարբեր մակարդակների անձանց կողմից:

Գլուխ 3. Անձնական փորձ և հետազոտություն

Օրվա դասի պլանը

Առարկա՝ մաթեմատիկա

Դասարանը՝ II

Դասի թեման՝ անհայտը գումարելիս գտնելը

Դասի նպատակը՝ • զարգացնել արագ հաշվելու կարողությունը

• ամրապնդել գումարման բաղադրիչների մասին ունեցած գիտելիքները

• որոշումներ կայացնելու, սեփական և ուրիշների

դատողություններին քննադատաբար վերաբերվելու, խմբում աշխատելու կարողությունների ձևավորում

Դասի վերջնարդյունքները՝ • գտնել անհայտը գումարելիս

• դասավորել թվերը աճման, նվազման կարգով

• տրամաբանի, վերլուծի, քայլեր ձեռնարկի

իրավիճակից դուրս գալու համար

Ընդհանուր խաչվող հասկացություններ՝ անհատներ և հարաբերությունների հավասարությունները

Միջառարկայական կապերը՝ Մայրենի: Կարողանա մտքերը հստակ ու գրագետ

ձևակերպել: Հասկանալով կարդալ առաջադրանքները

ու տեղեկատվությունը, արտահայտե կարդացալիս

վերաբերյալ հարցերը:

Անհրաժեշտ նյութերը՝

• կաշուն թերթիկներ

• քարտեր

Դասի ընթացքը

Քայլ 1. Շարունակելով միմյանց լրացնել վանդակները

$$10 \xrightarrow{-3} \square \xrightarrow{+15} \square \xrightarrow{+15} \square \xrightarrow{-6} \square \xrightarrow{+10} \square \xrightarrow{+2} \square \xrightarrow{-7} 8$$

Քայլ 2.

I խումբ ստացված թիվը դասավորել աճման կարգով


II ստացված թվերը դասավորել նվազման կարգով

III գրել ստացված յուրաքանչյուր թվի հաջորդ թիվը

IV գրել ստացված յուրաքանչյուր թվի նախորդ թիվը

Քայլ 3.

Կենդանիները հավաքվել են գնացքի կայարանում : նրանք չգիտեն թե որ վագոնը ում համար է նախատեսված: Եկեք օգնենք նրանց ապահով և անվտանգ տեղ հասնելու հարցում:



$$\square + 8 = 10$$

$$\square + 12 = 16$$

$$7 + \square = 12$$

$$\square + 9 = 12$$



Քայլ 4

Իրավիճակ 1

Աշոտը ունի 70 դրամ: նա որոշել է քույրիկի համար գնել կարկանդակ և անձեռոցիկ: Կարկանդակն արժե 70 դրամ, իսկ անձեռոցիկը 20 դրամ: Օգնեք Աշոտին ճիշտ որոշում կայացնել

- գնել միայն կարկանդակ
- հայրիկից գումար խնդրել, որեպագի քույրը քաղցած չմնա
- գնել միայն անձեռոցիկ
- այլ տարբերակ

Իրավիճակ 2

Դուք ունեք որոշակի գումար, Ի՞նչ նպատակով այն կօգտագործեք

- գնել քաղցրավենիք
- գնալ <<Խաղ զվարճալիքների կենտրոն>>
- օգնել միայնակ ծերուկին

Անդրադարձ

Կազմակերպել զրույց-քննարկում

- Ի՞նչ որոշում կայացնել: հիմնավորել ձեր ընտրությունը
- հեշտ էր որոշում կայացնելը
- ինչպես է հեշտ որոշում ընդունել ` խմբով թե մենակ
- ինչ է անհրաժեշտ որոշում կայացնելու համար

Գլուխ 3.1 Օրվա դասի պլանը

Առարկա՝ Ես և շրջակա աշխարհը

Դասարան՝ II

Թեմա՝ Ժամանակ

Դասի նպատակը՝ Օգնել իրենց և ուրիշներին անցյալում, ներկայում և ապագայում դիտարկելով

Դասի վերջնաարդյունքները՝ տարբերակել անցյալը, ներկան և ապագան , նկարագրել իրադարձությունները տարբեր ժամանակներում: Կազմել օրվա ռեժիմ՝ ճիշտ բաշխելով օրը աշխատանքի, հանգստի, զբաղմունքի և քնի միջև:

Ընդհանուր խաչվող հասկացություններ՝ • Ժամանակ և տարածություն

• Օրինաչափություն

• Կայունություն և փոփոխություն

Միջառարկայական կապեր՝ Մայրենի: Կարողանա մտքերը հստակ և գրագետ ձևակերպել:

Կերպարվեստ: Կարողանա նկարել

Մաթեմատիկա: Կարողանա անցյալի, ներկայի և

ապագայի մասին խոսելիս

ժամանակի թվագրման մասին ճիշտ բառապաշար

օգտագործել:

Անհրաժեշտ նյութեր՝ • Դասագիրք «Ես և շրջակա աշխարհը»

• Նկարչական պարագաներ

Դասի ընթացք

Սովորողները բաժանվում են 3 խմբի

• Օր

• Շաբաթ

• Տարի

Խնդրահարույց հարց: Ինչու՞ է պետք ճիշտ տնօրինել ժամանակը: Ինչպե՞ս Բաշխել օրը աշխատանքի, հանգստի, զբաղմունքի և ժամանակի միջև:

<<Օր>> խումբը կներկայացնի նկարաշարը օգտագործելով օրվա մասերը նշանավորող բառերը ու հասկացությունները՝ լուսաբաց, առավոտ, կեսօր, երեկո, գիշեր: Կսովորի ճիշտ տնօրինել ժամանակը:

Խնդրահարույց հարց: Ի՞նչ եք արել ողջ շաբաթվա ընթացքում:

<<Շաբաթ>> խումբը տրված աշխատանքի վերևի մասում կշնի շաբաթվա օրերը կպատմի թե ինչ է արել շաբաթվա ընթացքում կիրառելով այսօր, երեկ, վաղը, երկու օր առաջ կամ մի քանի օր հետո բառերն ու հասկացությունները:

Խնդրահարույց հարց: Ինչու՞ է աշնանը հաճախակի անձրև գալիս, իսկ ձմռանը ձյուն:

<<Տարի>> խումբը կխոսի տարվա եղանակների, ամիսների, բնության երևույթների և փոփոխությունների մասին: Կնշի թե որ եղանակն են ամենից շատ սիրում և ինչու՞ :

Հայտորոշիչ տեստ

Այսօր երկուշաբթի է իսկ վաղը կիրակի

• Այո

• Ոչ

• Չգիտեմ

Ձմռանը թռչունները չվում են տաք երկրներ

• Այո

• Ոչ

• Չգիտեմ

Օրվա ռեժիմը կարևոր է աշխատանքը ճիշտ և ժամանակին ավարտելու համար

• Այո

• Ոչ

• Չգիտեմ

Օգոստոսը ձմռան ամիս է

• Այո

• Ոչ

• Չգիտեմ

Եզրակացություն

Պրոբլեմային ուսուցումը թե՛ ծանոթ և թե՛ խիստ նորարարական մեթոդ է, որը վերափոխում է ուսուցչի աշակերտների փորձը դատարանում: Պրոբլեմային ուսուցումը հենվում է տրամաբանական և որոնողա-ճանաչողական գործողությունների վրա, համարվում է անհայտի բազմակողմանի զարգացում ապահովող միջոց, քանի որ պայմաններ է ստեղծում ունեցած գիտելիքները նոր իրավիճակում օգտագործելու համար:

Աշակերտները խմբերով աշխատելու ընթացքում վեր են լուծում, բանավիճում, առաջարկում և փորձում ճիշտ լուծումներ գտնել: Նրանք ազատորեն արտահայտում են իրենց մտքերը և միմյանց հետ շփվելով դառնում ակտիվ ուսումնառության ականատես, իսկ հատուկ կազմված առաջադրանքների շնորհիվ կարողանում են ինքնարտահայտվել, որն էլ կյանքում հաջողության հասնելու գրավականն է:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, ԱՅՌԵՔՍ, Երևան 2003
2. Կարեն Սահակիան «Մանկավարժություն» առարկայի ուսումնասիրման մեթոդական ցուցումներ և առաջադրանքներ :
3. Ամիրջանյան Յուրի, «Մանկավարժություն», Երևան 2005 :
4. Համացանց :